



ԾՆՄՁԻՄՅ ԾՄԾՁՅԻՆՈՒՆՆԵՐՈՒՄ ԻԾՆՈՒՄՆԱԿԱՆ ՊՐՈԳՆՈԶՈՒՄ ԿՐԹՈՒՄԻ  
**ԾԾՓՄ**

N 747 Ա/Ք

26.08.2015թ.:

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ  
ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի հմ.  
1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 2.1 և 2.2 կետերի.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ'**

1. Սահմանել՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառող ուսանողների միջին որակական գնահատականի նվազագույն շեմը.
  - 1) բակալավրի կրթական ծրագրի համար՝ 75 % /ՄՈԳ/,
  - 2) մագիստրոսի կրթական ծրագրի համար՝ 80 % /ՄՈԳ/:
2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 18-ը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանն ներկայացնել պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցման նպատակով՝ ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ